# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1157-Ա « 27 » փետրվարի 2026թ.

## «ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ և 84-րդ հոդվածներով.

1. Հաստատել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության՝ 2026 թվականի եկամուտների և ծախսերի ու դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն N 1-2 հավելվածների:

2. Հանձնարարել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին «Պարգևատրում» հոդվածի գծով գումարները, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրամական միջոցների ազատ մնացորդն օգտագործել բացառապես աշխատակազմի ֆինանսական վարչության հետ համաձայնեցնելուց հետո:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի և «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Գրիգորյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**